<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/11>>

ք. Վանաձոր «01» ապրիլի 2020թ.

<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-ը, ի դեմս Ա.Ա.Ղուլիջանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Էդմոնա>> ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացուցով նախատեսված ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ

փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Հնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 287 380 /երկու հարյուր ութսունյոթ հազար երեք հարյուր ութսուն/ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը*

գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ-ղ
Հ/Հ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087
Տնօրեն՝ Ա.Ա. Խաչատրյան

____

ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<Էդմոնա>>ՍՊԸ
ք.Վանաձոր, Մյասնիկյան 4
<<Յունիբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 24101012510200
ՀՎՀՀ 06805314
Տնօրեն՝ Ա.Սարգսյան

____

Հավելված N 1
<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/11>> ծածկագրով
16 մարտի 2021թ. կնքված պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ-ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի						
Հ/Հ	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր առավելագույն քանակը
1	Տետր 12 թերթ	Տետր սովորական, կազմը ստվարաթղթից, քառակուսի թերթերով	հատ	40	400	10
2	Տետր 40 թերթ	Տետր սովորական, կազմը ստվարաթղթից, քառակուսի թերթերով	հատ	100	1,000	10
3	Տետր 96 թերթ	Տետր սովորական, կազմը ստվարաթղթից, քառակուսի թերթերով	հատ	240	2,400	10
4	Գրիչ	Գրիչ գնդիկավոր, պլաստմասե իրանով, փոխարինվող միջուկով ռետինե բռնակով և կափարիչով: «CELLO OFFISE կամ համարժեք :	հատ	50	12,000	240
5	Գրիչ գելային	Գրիչ գելային՝ կափարիչով, պլաստմասե: «Aihao» կամ համարժեք:	հատ	200	1,200	6
6	Մատիտ	Մատիտ HB, սրած, ռետինե ջնջոցով: «Flamingo» կամ համարժեք:	հատ	50	750	15
7	Ռետին	Ռետինե, 50 մմ՝ նախատեսված մատիտով գրվածքները մաքրելու համար: «Maped» կամ համարժեք:	հատ	100	600	6
8	Սրիչ	Սրիչ մատիտի համար սովորական, պլաստիկ, առանձ պահուցի, ամրացվող:	հատ	300	1,500	5
9	Սոսինձ չոր 22գր	Սոսինձ չոր, չափագրված 22գր: «FANTASTIK» կամ համարժեք:	հատ	400	32,000	80
10	Սպիտակեցնող գրիչ /շտրիխ/	Սպիտակեցնող շտրիխ, գրիչատիպ 9 մլ: «Flamingo» կամ համարժեք:	հատ	200	4,200	21
11	Քանոն փայտե 30սմ	Ուղիղ քանոն, գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը՝ 30սմ:	հատ	100	200	2
12	Ծրար նամակի /115*225/	Ծրար սպիտակ, առանձ գրությունների, փակվող հատվածը ինքնասոսնձվող՝ 115x225 մմ չափի	հատ	15	3,000	200
13	Ծրար նամակի /210*297/	Ծրար սպիտակ, առանձ գրությունների, փակվող հատվածը ինքնասոսնձվող՝ 220x320մմ չափի, Ա4 թղթերի համար	հատ	40	2,400	60
14	Ծրար նամակի /297*410/	Ծրար սպիտակ, առանձ գրությունների, փակվող հատվածը ինքնասոսնձվող՝ 310x420մմ, Ա3 թղթերի համար:	հատ	60	600	10

15	Կպչուն ժապավեն	Սկոչ 45մմ x 100մ չափսերի, թափանցիկ, ինքնակպչուն:	փաթեթ	450	4,500	10
16	Կպչուն ժապավեն 2-կողմանի	Սկոչ երկկողմանի կպչողունակությամբ, 20մմ լայնությամբ 10մ երկարությամբ, սպիտակ:	փաթեթ	250	750	3
17	Ամրակ	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, վինիլային ծածկույթով, 33մմ: Տուփի մեջ 100հատ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար: «Staples» կամ համարժեք:	տուփ	100	400	4
18	Կոճգամ մետաղական	Կոճգամ մետաղական, տուփի մեջ 50 հատ:	տուփ	150	600	4
19	Կոճգամ	Կոճգամ-մեխիկ, պլաստմասե գլխիկով,տարբեր գույների:Տուփի մեջ 50 հատ, պլաստմասե տուփերով:	տուփ	160	1,600	10
20	Կարիչ /ստեպլեր/	Կարիչ գրասենյակային՝ 20-30 էջ կարելու համար: Օգտագործվող ասեղների քանակը՝ 50, ասեղի համարը՝ 24:	տուփ	1300	6,500	5
21	Կարիչի մետաղալարե կապեր 10	Մետաղալարային կապեր՝ սկոբա, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 10մմ/6մմ: Տուփի մեջ 1000 հատ: «Kangaro» կամ համարժեք:	տուփ	70	700	10
22	Կարիչի մետաղալարե կապեր 26/6	Մետաղալարային կապեր՝ սկոբա, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 26մմ/6մմ:Տուփի մեջ 1000 հատ: «Kangaro» կամ համարժեք:	տուփ	120	600	5
23	Թանաք կնիքի համար	Թանաք կնիքի, շտամպի բարձիկների համար, 30մլ:	հատ	900	1,800	2
24	Բարձիկ թանաքի	Բարձիկ դրոշմակնիքի համար, իր տուփով՝ 6.5 x 8.5 սմ չափերի,/կապույտ գույնի/:	հատ	350	700	2
25	Թղթապանակ կոճգամով Ա4	Թղթապանակ պոլիմերային կոճգամով, A4 ֆորմատի: «Dark Blue» կամ համարժեք:	հատ	70	1,400	20
26	Թղթապանակ կոճգամով, մեծ	Թղթապանակ պոլիմերային կոճգամով, Ա4-ից մեծ 23x33սմ: «Dark Blue» կամ համարժեք:	հատ	100	2,000	20
27	Թղթապանակ	Թղթապանակ-ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի, Նախատեսված 100 թերթի համար, տարբեր գույների:	հատ	700	2,100	3
28	Թղթապանակ ֆայլ 40միկրոն	Թափանցիկ պոլիէթիլենից ֆայլ, A4 չափի փաստաթղթերի համար, 40 միկրոն, 100 հատ:«Impulse» կամ համարժեք:	տուփ	1000	25,000	25
29	Թղթապանակ ֆայլ 60միկրոն	Թափանցիկ պոլիէթիլենից ֆայլ, A4 չափի փաստաթղթերի համար, 60 միկրոն, 100 հատ: «Impulse» կամ համարժեք:	տուփ	1500	3,000	2
30	Արագակար պոլիմերային	Արագակար՝պլաստիկից, առջևից թափանցիկ, A4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական հարմարանքով:	հատ	80	3,200	40

31	Նոթատետր	Նոթատետր A5 չափի, 100 թերթ, տողանի, կոշտ երեսապատված կազմով:	հատ	800	4,000	5
32	Նոթատետր	Նոթատետր գրառումների համար, Ա5 ֆորմատի, տողանի, 70թերթ, վերևից պարույրով:	հատ	180	1,080	6
33	Թուղթ գրելու A4 80գր	Թուղթ A4 ֆորմատի, թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար:Չափերը 210x297մմ, միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ2: «Double A» կամ համարժեք:ԳՕՍՏ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի: Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուր տուփի մեջ 500թերթ, փաթեթի քաշը՝ 2,5 կգ:	տուփ	1700	102,000	60
34	Թուղթ գունավոր A4, 80գ	Գունավոր թուղթ՝ նախատեսված է ծավալային տարատեսակ աշխատանքների համար, A4 80գր ֆորմատի:	կգ	1800	1,800	1
35	Թուղթ ՀԴՄ-ի	Թերմոթուղթ նախատեսված ՀԴՄ-ի համար, 60մմx10մ	փաթեթ	45	2,700	60
36	Թուղթ նշումների կպչուն	Գունավոր թղթից, վերևի հատվածը ինքնակպչուն, տրցակներով, չափերը՝ 75մմ x 75մմ:	տուփ	120	1,200	10
37	Թուղթ նշումների համար	Նշումների թուղթ, սպիտակ գույնի, 75մմ x 75մմ, 800թերթ: «SINAR» կամ համարժեք:	տուփ	750	7,500	10
38	Գնապիտակ կպչուն	Թղթե,ինքակպչուն, փաթեթով, 50*35մմ, փաթեթի մեջ 200 հատ	փաթեթ	180	1,800	10
39	Կազմ գրքերի	Կազմ պոլիէթիլենային, ինքնակպչուն, 50*30 սմ	հատ	55	2,200	40
40	Էջանիշ կպչուն	Գունավոր պլաստիկից, կպչուն, 4 գույն	հատ	200	600	3
41	Ընդգծիչ (մարկեր)	Ընդգծիչ (մարկեր), տարբեր գույների: «Faber-Castel» կամ համարժեք:	հատ	200	400	2
42	Հաշվիչ	Հաշվիչ մեքենա (կալկուլատոր)10 նիշ ,10x14սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա, ինքնալիցքավորվող:	հատ	4500	22,500	5
43	Քարթրիջ ,,Laser Jet 1022,,	Նախատեսված ,,Laser Jet 1022,, տեսակի տպիչի համար:	հատ	7500	7,500	1
44	Քարթրիջ ,,Canon 712 ,,	Նախատեսված ,,Canon 712 ,, տեսակի տպիչի համար:	հատ	7500	7,500	1
45	Քարթրիջ ,,Canon 325 Starter	Նախատեսված ,,Canon 325 Starter ,, տեսակի տպիչի համար:	հատ	7500	7,500	1
				ԸՆԴԱՄԵՆԸ՝	287,380	

Ընդամենը՝ Երեք հարյուր չորս հազար երկու հարյուր յոթանասուն դրամ:

1.Մատակարարումը իրականացվում է ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող քանակների և մատակարարման ժամկետների, մատակարարումները իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 2 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործելու է մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը: Մատակարարման վայրը՝ **ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57**:

2.Վճարումները կատարվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 20-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Մատակարի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.Ապրանքի վրա պարտադիր պետք է առկա լինի ֆիմայի նշանը: Ապրանքը չպետք է լինի օգտագործված կամ վնասված: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2 առկայություն:

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ	<<Էդմոնա>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	ք.Վանաձոր, Մյասնիկյան փ. 4
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ	<< Յունիբանկ>> ԲԲԸ
ՀՀ 1570015001210100	ՀՀ 24101012510200
ՀՎՀՀ 06902087	ՀՎՀՀ 06805314
Տնօրեն ՝ Ա.Ա.Ղուլիջանյան	Տնօրեն՝ Վ.Սարգսյան

Հավելված N 2
«16» մարտի 2021թ. կնքված
<<ԼՄՀՆԴ-ՄԱՊՁԲ-21/11>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1-45	Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր	32000	64000	96000	128000	160000	192000	224000	256000	287380	**287380**
		32000	64000	96000	128000	160000	192000	224000	256000	287380	**287380**

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

Ընդամենը՝ Երկու հարյուր ութսունյոթ հազար երեք հարյուր ութսուն դրամ:

ԳՆՈՐԴ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
ՀՀ 1570015001210100
ՀՎՀՀ 06902087
Տնօրեն՝ Լ.Ա.Պուլիջանյան

Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<Էդմոնա>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Մյասնիկյան փ. 5
<< Յունիբանկ>> ԲԲԸ
ՀՀ 24101012510200
ՀՎՀՀ 06805315
Տնօրեն՝ Ա.Սարգսյան

Կ.Տ.